



1500 Լ.Ո. 94-ԳԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 100 (26372) ԵՐԿՈՒՇԱՐԹԻ, 13 ՅՈՒԼԻՍ 2020 4 ԷԶ

ԱԿՆԱՐԿ

ԷՐՏՈՂԱՆԻ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԻՆ ԹԻՐԱԽԵ ԶՈՒՆԱՍՏԱՆԷ Է

Սուրբ Սոֆիան վերստին մզկիթի վերածելու Էրտոդանի հրամանագիրը անշուշտ տարբեր թիրախներ հարուածելու նպատակը կը հետապնդէ։ Եթէ ներքին սպառման համար Անգարայի վարիչը դիրքեր ամրապնդելու, ուժ ցուցադրելու եւ համաթրքական տարածակառութեամբ վարկանշիչ մրցանշային կետեր կ'ուզէ ապահովել, ապա համախմբմական աշխարհին մէջ ախոյեան եւ իսլամ զանգուածներու առաջնորդը հանդիսանալու յաւակնոտ քայլ կ'առնէ։

Առաջին անգամը չէ, որ Սուրբ Սոֆիայի ուղղութեամբ նման ոտնձգութիւններ կը կատարուին։ Անկէ առաջ եւս իսլամական արարողութիւններ կատարելու, եկեղեցին մզկիթի եւ ապա թանգարանի վերափոխելու կամ ընդհանրապէս անոր բիզանդական պատկանելիութիւնը նենգափոխելու բազմաթիւ պետական փորձեր կատարուած են։

Համաքրիստոնեական քաղաքակրթական արժէքներկայացնող այս կոթողի միջազգային ուշադրութիւնը առաւելաբար ԵՈՒՆԵՍԿՕ-ի դիտանկիւնէն եղած է իբրեւ մշակութային կոթող։ Հիմա յստակ ոտնահարում տեղի կ'ունենայ դէպի միջազգային ընտանիք։ Նախ անշուշտ նկատի ունենալով ԵՈՒՆԵՍԿՕ-ի նպատակային ֆինանսաւորումը ժողովուրդներու միջեւ համակեցութեան խորհրդանիշ-կառուցումը։

Համաքրիստոնեական դատապարտումներու մեծ ալիք պէտք չէ ակնկալել Էրտոդանի ստորագրած հրամանագիրին դիմաց։ Թէ՛ հրամանագիրը եւ թէ՛ հակազդեցութեան ալիքը քաղաքական դրդապատճառներ ունին։ Օրինակ՝ քրիստոնեական մշակոյթով յստկանշուած եւրոպական երկու երկիրներ կրնան բոլորովին տարբեր հակազդեցութիւններ ունենալ։

Լիպիոյ մէջ թրքական շահերու հետ սուր բախում ունեցող Ֆրանսան ամենէն ծանր մեղադրանքները կրնայ հնչեցնել, մինչ աշխարհագրական Նոյն տարածքին մէջ շահերու համատեղման կարգով Իտալիան աւելի կրատրական դիրք որդեգրէ։ Անկախ ներդասանական տարակարծութիւններէ, ուղղափառ եկեղեցւոյ մայր կեդրոնը հանդիսացած Սուրբ Սոֆիայի մզկիթի վերածումը կրնայ շատ չխռովել Մոսկուայի պետական շրջանակները, որոնք կը գիտակցին, թէ տակաւին Անգարայի հետ ռազմաքաղաքական գործողութիւններ համակարգելու առիթ եւ տեղ ունին։

Նոյն տրամաբանութիւնը կը որսէւորուի իսլամական աշխարհին մէջ։ Թուրքիոյ հետ մրցակցային յարաբերութիւններու եւ հակառակ դիրքերու վրայ գտնուող Եգիպտոսն ու Արաբական Միացեալ Էմիրութիւնները դատապարտեցին Թուրքիոյ նախագահին առած քայլը։

Կան ի հարկէ հայկական առնչութիւններ Տրդատ եւ Սիւան ճարտարապետներուն հետ կապուած ինչպէս նաեւ՝ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչի որմնակարին կամ Փորթա Արմենիսին (Հայկական դուռ), Բիզանդիոնի ծագումով հայ կայսրերու եւ կայսրուհիներու թագադրման արարողութիւններու։ Այս առնչութիւնները անշուշտ որբէւ կապ կամ ազդեցութիւն չունին քաղաքական մղումներով ստորագրուող հրամանագիրներուն կամ հակազդեցութիւններուն վրայ։ Քաղաքական հեռաւոր զուգահեռ մը հայկական առնչութեան հետ կրնայ գծուիլ Ախթամարի Սուրբ Խաչին ուղղութեամբ, թէ՛ միջազգային մշակութի կեդրոններու ներգրաւածութիւնը եւ թէ՛ եկեղեցւոյ վերանորոգման եւ մանաւանդ այնտեղ կատարուելիք եկեղեցական արարողութիւններու արտօնութեան կամ առհասարակ եկեղեցի-թանգարան կամ իսլամական արարողութեան օգտագործման վայրի պահանջները նկատի ունենալով։ Բոլորը կը վկայեն ո՛չ միայն հակաքաղաքակրթական վարքագիծի մը մասին, այլ նաեւ ոչ թուրք պատկանելիութիւն ունեցող մշակութային արժէքները թրջացնելու համապետական որոշումներուն մասին։

Ահա այստեղ է, որ հրամանագիրին առանցքային կէտը կ'ընդգծուի։ Բիզանդիոնի ժառանգորդը Յուսատանն է. յատկապէս քաղաքաիրթական, մշակութային ընկալումներով. մասնաւորաբար Պոլիսով. այս պարագային՝ Կոստանդնուպոլիսով։

Կոստանդնուպոլիս անուան օգտագործումն անգամ քրդառութեան սկսած էր մատնել Անգարայի պետական շրջանակները։ Վերջերս լարուածութեան բարձր աստիճանաչափով ուշադրութիւն կը գրաւէին թուրքոյն յարաբերութիւնները։ Սպառնալիքներ, մեղադրանքներ եւ աննախադէպ խստացումով հետտորութիւն, Անգարայի կողմէ Յունաստանի օդային տարածքին ուղղութեամբ կատարուող ոտնձգութիւններ, յունական կղզիներու թրքական պատկանելիութեան մասին յայտարարութիւններ՝ Յունաստանի եւ Թուրքիոյ միջեւ նախապատերազմական մթնոլորտ յառաջածուցած էին եւ անշուշտ Յունաստանի դէմ Թուրքիոյ յարձակման որոշումի փաստաթուղթը՝ «գաղտնագերծում»։

Պատահական չէ, որ Յունաստանի պետական շրջանակներէն կը հնչեն կոչեր՝ հիւսիսային Յունաստանի մէջ գտնուող Աթթալոքի տունը Պոնտոսի յոյներու ցեղապատութեան յիշատակի թանգարանի վերածելու մասին։

Ամիս մը առաջ Անգարայի մէջ տեղի կ'ունենար Էրտոդանի գլխաւորութեամբ խորհրդատուական բարձրագոյն մարմինի հիւնգծամէյա նիստը՝ յատկացուած Հայոց ցեղապատութեան ճանայման դէմ պետական պայքարին։

Լուպիստական խմբաւորումներու դէմ Անգարայի պայքարը կը թիրախաւորէ նաեւ յունական **լուպիս**։ Տարբեր ձեւաչափերու մէջ Յունաստանն ու Հայաստանը նաեւ Կիպրոսը ներառելով ռազմավարական գործընկերութիւններ ստորագրած են եւ կը համագործակցին միջազգային ընտանիքի տարբեր կառոյցներու մէջ։ Այս բոլորը յայտաւբար մաս կազմած են բարձրագոյն մարմինի օրակարգի կէտերուն։

Սուրբ Սոֆիայէն լսելի **նամազը** ազդանշան է, որ Անգարան յունական տարածքներու ուղղութեամբ առաջմ քաղաքական գործողութիւններու պիտի ձեռնարկէ։

«Ա.»

«Ս. ՍՈՖԻԱՅԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ՓՈԽԵԼԸ ԴԷՊԻ ՀԶՕՐ ԹՈՒՐԲԻԱ ՏԱՆՈՂ ՔԱՅԼ Է, ԻՍԿ ՄՆԱՅԵԱԼ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ԿԱՐԾԻՔԸ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆ ՉՈՒՆԷ»

Կ'ԸՍԷ ԷՐՏՈՂԱՆ

Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայիփ Էրտոդան յայտարարած է, որ Պոլսոյ Ս. Սոֆիա տաճարի կարգավիճակը փոխելը դէպի հզօր Թուրքիա տանող քայլ է, իսկ մնացեալ երկիրներու կարծիքը նշանակութիւն չունի։ Այս մասին կը հաղորդէ «ՌԻԱ Նովոսթի» լրատու գործակալութիւնը։

«Մենք Այա Սոֆիայի կարգավիճակը փոխելու որոշում տուած ենք՝ հիմնըւելով ժողովուրդի կարծիքին վրայ, եւ ոչ թէ մտածած, թէ ուրիշները մեր մասին ինչ պիտի ըսեն», ընդգծած է Էրտոդան։

Նախքան այդ, «Տը Հիլ» հաղորդեց, թէ Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարութեան բանքեր Մորկիւ Օրթալուս յայտարարած է. «Մենք հիասթափուած ենք Ս. Սոֆիա տաճարի կարգավիճակը փոխելու վերաբերեալ Թուրքիոյ կառավարութեան որոշումէն։ Այդ շէնքը «Պոլսոյ պատմական կառոյցներ»-ու կարեւոր մասն է, որ ընդգրկուած է ԵՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգութեան ցուցակին վրայ՝ ի նշան ատոր հարուստ բազմամշակութային պատմութեան ճանաչման»։

«Մենք կը հասկնանք, որ թրքական կառավարութիւնը կը շարունակէ հաւատարիմ մնալ Սուրբ Սոֆիա տաճարի բոլոր այցելուներու մուտքը ապահովելու քաղաքականութեան, եւ



կ'ակնկալենք լսել Սուրբ Սոֆիայի տաճարի հետագայ կառավարման ծրագիրները, որոնք պիտի ապահովեն բոլոր այցելուներու անարգել մուտքը», նշուած է Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարութեան մէջ։

Ինչպէս կը գրէ օրաթերթը, Էրտոդանի որոշումը խիստ քննադատուած է Ծերակոյտի միջազգային յարաբերութիւններու յանձնախումբի նախագահ Ճեյմս Ռիչի եւ բարձրաստիճան անդամ Պապ Մենեստեսի կողմէ, որոնք Էրտոդանի՝ Ս. Սոֆիա տաճարը մզկիթի վերածելու որոշումը որակած են «ամբողջ աշխարհի քրիստոնեաներու համար խոր վիճարարանք»։

«Մենք վճռականօրէն կը դատապարտենք Սուրբ Սոֆիա տաճարի բոլոր այցելուներու մուտքը ապահովելու նախագահ Էրտոդանի որո-

ԱՆԴՐԱՊԱՌՆԱԼԷ ԵՏԷ ԼԻԲԱՆԱՆԵԱՎԵՐՁԻՆ ՉԱՐԳԱՑՈՒՄՆԵՐՈՒՆ՝

ՍՈՒՐԲ ՍՈՖԻԱՅԻ ԴԷՄ ՏՐՈՒԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ՆՈՐ ՕՍՄԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԵԿ ԱՐԱՐՆ Է

ՀԱՍՏԱՏԵՑ ԵՐԵՍՓՈՒԱՆ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ «Օ.Թ.Կի».-Ի ՀԵՏ ԻՐ ՈՒՆԵՑԱԾ ՀԱՐՑԱՂՈՐՑՅԻՆ

ՀՀԻ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի եւ Հայկական երեսփոխանական պլոքի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բագրատունի երէկ հիւրն էր «Օ.Թ.Կի.» կայանի «Ռահ նեպաւ սաուա» հաղորդումին։ Հարցազրոյցը ընթացքին երեսփոխան Յակոբ Բագրատունի հանգամանօրէն անդրադարձաւ երկիրը յուզող հիմնախնդիրներուն եւ անոնց լոյսին տակ կենքադարձական իրավիճակին, հիմնաւորեց գործող նպատարութեան նկատմամբ Ղաշնակցութեան զօրակցական կեցուածքը՝ համալիբանանեան շահերէ մեկնած եւ խօսեցաւ ՀՀԻ Լիբանանի կազմակերպութեան քաղաքական համագործակցութեան եւ ինքնուրոյն դիրքորոշումներուն մասին։

Յ. Բագրատունի խօսեցաւ տնտեսական եւ Ֆինանսական տագնապի մէջ յայտնուած լիբանանցի քաղաքացիին աջօրեային եւ տեղեծուած Նոր իրավիճակին մասին։ Բարենորոգումները անհրաժեշտութիւն նկատելով՝ ան Լիբանանի հողին վրայ ընթացող կրեւելք-կրեւմուտք պայքարին մէջ անհրաժեշտ նկատեց ազգային սկզբունքներու հիման վրայ կողմնորոշումները։

Երեսփոխան Բագրատունի ծիշը չնկատեց լիբանանեան կողմերուն այս կամ այն օտար պետութեան դաշնակից յայտարարելը, ինչ որ լուրջ հարուած կը հասցնէ Լիբանանի գերիշխանութեան։

Հարցազրոյցին առիթ եղաւ անդրադառնալու Սուրբ Սոֆիայի տաճարը վերստին մզկիթի վերածելու երեւոյթին։ Յ. Բագրատունի արարքը նկատեց Նոր օսմանականութեան հաստատման մէկ փուլը եւ ժխտողականութեան հերթական դրսեւորումը։

Հարցազրոյցի բովանդակութեան աւելի մանրամասն կ'անդրադառնանք մեր վաղուան թիւով։

«ՔՈՐՈՒՆ» ԺԱՀՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷԶ

12 յուլիսի դրութեամբ Հայաստանի մէջ հաստատուած է «Քորոնա»-ով վարակուածներու ընդհանուր 31.969 պարագայ, որոնցմէ 19.633-ը՝ ապաքինած։ Այս մասին յայտնած է Հայաստանի առողջապահութեան նախարարութեան Հիւանդութիւններու վերահսկման եւ կանխարգիլման ազգային կեդրոնը։

Մէկ օրուան ընթացքին արձանագրուած է վարակման 577 Նոր պարագայ եւ 124 ապաքինում։

Քննութիւններու ընդհանուր թիւն է 134.988։

Ընդհանուր առմամբ «Քորոնա» ժահրէն մահացածներուն թիւը հասած է 565-ի։

ՀԱՅԿԱԿԱՆ ՉԻՆՈՒՄԾ ՈՒԺԵՐԸ ԿԱՆԿԱԾ ԵՆ ԱԶՐՊԷՅՑԱՆՅԻ ՉԻՆՈՒՈՐՆԵՐՈՒ ԿՈՐԱԷ ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԸ ԽԱՍՏԵԼՈՒ ՓՈՐՁԸ

ԱԶՐՊԷՅՑԱՆԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՀԱՍՏԱՏԷ 2 ՍՊԱՆՆՈՒԱԾ ԵՒ 5 ՎԻՐԱՊՈՐ ԶԻՆՈՒՈՐՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ ԼՈՒՐԵՐԸ

Ազրպէյճանի զինուած ուժերու զինուորները 12 յուլիսին՝ մօտ ժամը 12:30-ին, ՌԻԱԶ մակնիշի մեքենայով Տաւուշի ուղղութեամբ Հայաստանի պետական սահմանը խախտելու փորձ կատարած են։

«Արմէնպրես»-ի հաղորդումով՝ այս մասին Դիմատետրի Շար.ը՝ էջ 3

ՆԱԳԴԱԼԵԱՆ ՄԵԿՆԱԲԱՆԱԾ Է ՍՈՒՐԲ ՍՈՖԻԱՅԻ ՏԱՃԱՐԻՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ՓՈԽԵԼՈՒ ԹՈՒՐԲԻՈՅ ՈՐՈՇՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետութեան արտաքին գործոց նախարարութեան մամլոյ բանքեր Աննա Նաղդալեան մեկնաբանած է Սուրբ Սոֆիայի տաճարի կարգավիճակի փոփոխութեան վերաբերեալ Թուրքիոյ իշխանութիւններուն որոշումը։

Ստորեւ՝ մամլոյ բանքերին մեկնաբանութիւնը. «Նորապէս մտահոգ ենք ԵՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգութեան վայր հանդիսացող Սուրբ Սոֆիայի

Շար.ը՝ էջ 3

ՄԵՆՔ՝

ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅՏԵՐՍ ԱՌԱՆՁԻՆ ՉԵՆՔ

Ժամանակի ընթացքին Լիբանանի տնտեսական, էլեմտական թէ ընկերային կացութեան աստիճանական վատթարացումին եկան միանալու անցնող ամիսներուն քաղաքական անբարեղէպ զարգացումներն ու վերջապէս «Քորոնա» ժահրի առողջապահական թէ ատկէ յառաջացած տնտեսական պայմաններու գահավիժումը։

Լիբանանի քաղաքացին այսօր աննախընթաց կացութեան մէջ է, որ Նոյնիսկ կարելի չէ բաղդատել լիբանանեան պատերազմի սեւ օրերուն, գէթ տնտեսական իմաստով։

Այս իրավիճակէն հեռու չէ եւ չէր կրնար ըլլալ լիբանանահայութիւնը, որ տասնամեկնի տարեդ յաջողեցաւ տոկալ Լիբանանն ու հայութիւնը հարուածող տարբեր փոթորիկներու՝ ապահովելով իր գոյատեւումն ու միաժամանակ արինատար երակը եղաւ համախալկական ընդհանրական ճիգին եւ սփիւռքի տարբեր գաղութներու զարգացման ի սպաս։

Տագնապի առաջին օրերէն պատասխանատուութեան գիտակցութեամբ հանդէս եկան Լիբանանի հայութեան մէջ դերակատարութիւն ստանձնած տարբեր շրջանակներ՝ սկսելով Մեծի Տանն Կիլիկիոյ հայրապետէն, հոգեւոր պետեր, քաղաքական, բարեսիրական, կուսակցական թէ միութեական հեղիսակութիւններ, մինչեւ անհատ բարերարներ եւ անյայտ սրտցաւ ազգայիններ։

Հակառակ պատահական դժգոհութեանց, բամբասանքի թէ չարախօսութեանց, անիմմ ամբաստանութեանց թէ քարոզչական մտածուած եւ քաղաքական նպատակներով թիրախաւորման, լիբանանահայութիւնը ցարդ, մեծապէս կրցաւ ինքզինք պահպանել ու ապրեցնել իր առօրեան։

Այսուհանդերձ, ոչ մէկ ատեն պատահած է, որ Լիբանանի հայութեան եւ մեր հայ օճախին գոյութիւնը ինքնանպատակ եղած ըլլայ։

Փաստօրէն, Լիբանանի հայութիւնը ապրած, գոյատեւած, պայքարած է համայն հայութեան գոյատեւան ուժեղացման ու զարգացման համար։

Այն օրերուն, երբ տկար հոգիներ շիրմաքար կ'ուզէն դնել Լիբանանի հայութեան վրայ, ահա կը վերընձիւղուի համահայկական գիտակցութիւնն ու պատրաստակամութիւնը՝ օժանդակութեան ձեռք երկարելու Լիբանանի հայութեան, այն խոր համոզումով, որ Լիբանանի մէջ հզօր հայկական օճախը, հզօրութիւն է ու արժէք համայն հայութեան համար։

Տագնապի առաջին օրերու նախաձեռնութիւններուն միացան աւելի մեծ ու կազմակերպուած աշխատանքներ։ Հայաստանէն մինչեւ սփիւռքեան գաղութներ, կրօնական հեղիսակութիւններ թէ անհատներ միացան այս ճիգին։

Հայ օգնութեան միութեան նախաձեռնութեան զուգահեռ, վերջին օրերուն մենք սկսանք շօշափել ՀՀ Ղաշնակցութեան Բիւրոյի նախաձեռնած հանգանակութեան գործնական արդիւնքները, որոնք պիտի շարունակուին անկասկած։

Հայաստան, Արցախ, արաբական երկիրներ, Եւրոպա, Միացեալ Նահանգներու արեւելեան եւ արեմտեան շրջաններ, Զանաւա, Արժանքին, Ուրուկուէ, Պրագիւ, Աւստրալիա եւ հոն, ուր դաշնակցական կառոյց կը գործէ, հակառակ համաշխարհային ճգնաժամին, մեր ընկերները, արդէն իսկ արթուն եւ գիտակից պատրաստակամութեամբ լծուած են Լիբանանի հայութեան կարիքներուն հասնելու անյետաձգելի գործին։

Վստապ պէտք է ըլլալ, որ դաշնակցական նախաձեռնութիւն մը միայն դաշնակցական մարդու զօրակցութեամբ չի յաջողի եւ դաշնակցական նախաձեռնութիւն մը չի մնար միայն դաշնակցական շրջանակներու օժանդակելու ծիրին մէջ։

Այն, ինչ որ կը կատարուի Ղաշնակցութեան նախաձեռնութեամբ, վստահօրէն կը դրուի Լիբանանի հայութեան ծառայութեան մէջ։

Տագնապահար է Լիբանանը։

Տագնապի մէջ է Լիբանանի հայութիւնը։

Բայց առանձին չէ Լիբանանի հայութիւնը։

Վստախաբար առանձին պիտի չմնայ։

Կը բաւէ պահել հաւատքը, կամքը, աշխատելու վճռականութիւնը, եւ կը գոյատեւէ Լիբանանի հայութիւնը։

Կը բաւէ անձնական տկարութիւնները ընդհանրացնել ու պատասխանատուութիւններէ չխուսափիլ, եւ կը գոյատեւէ լիբանանահայութիւնը։

Կը բաւէ բարձր պահել Լիբանանի հայ մարդուն արժանապատուութիւնը, եւ վստախաբար կը գոյատեւէ լիբանանահայութիւնը։

Լիբանանի հայութեան գոյատեւումը իւրաքանչիւր հայ բազուկի պարտաւորութիւնն է։ Նախ մենք, Լիբանանի մէջ։

Ու ապա համայն հայութեան, Հայաստանէն մինչեւ սփիւռքի ամենէն հեռաւոր հայ օճախը։

Մենք առանձին չենք։

Յ. ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

«Ս. ՍՈՖԻԱՅԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ՓՈԽԵԼԸ...»

Շարունակում Ա. Էջն

շարունակ եղած է արտասովոր եւ հիւրընկալ վայր բոլոր դասնանքներու մարդոց համար», Նշուած է միացեալ յայտարարութեան մէջ:

Յիշեցնենք, որ Թուրքիոյ պետական խորհուրդը (բարձրագոյն վարչական դատարան) ուրբաթ օր չեղեալ յայտարարած էր Պոլսոյ Ս. Սոֆիա տաճարը թանգարան դարձնելու մասին 1934 թուականի որոշումը: Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայիփ Էրտողան ատկէ ետք հրամանագիր ստորագրած էր տաճարը մզկիթի վերածելու մասին:

Փրանսայի արտաքին գործոց նախարար ժան-Իվ Լը Տրիան քննադատեց Անգարայի որոշումը եւ յայտարարեց, որ տաճարը պէտք է պահպանուի իբրեւ կրօնական բազմազանութեան եւ հանդուրժողականութեան խորհրդանիշ:

«Մենք մեծ փստասնքով ընդունած ենք Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայիփ Էրտողանի որոշումը: Սուրբ Սոֆիայի տաճարը պէտք է շարունակէ կրօնական բազմազանութեան եւ հանդուրժողականութեան խորհրդանիշ ըլլալ», ըսաւ ֆրանսական դիւանագիտութեան պետը:

Կիպրոսի նախագահ Նիքոս Անասթասիատես յայտարարեց. «Թրքական պետական խորհուրդի՝ Այա Սոֆիան մզկիթի վերածելու որոշումը ամբողջ քաղաքակիրթ աշխարհին եւ անոր միջազգային կազմակերպութիւններուն համար յաւելեալ խնդիր մըն է»:

Կիպրոսի նախագահը թրքական իշխանութիւններուն այս քայլը նկատեց «պատմութենէն շեղում եւ սրբապղծում համաշխարհային ժառանգութեան վայրի մը, որ իւրայատուկ զգացական արժէք ունի աշխարհի տարածքին բոլոր քրիստոնեաներուն համար»:

Յունաստանի արտաքին գործոց նախարար Նիքոս Տակտիաս «Սքայ» պատկերասփիւռի կայանին հետ հարցազրոյցի ընթացքին յայտնեց, որ Ս. Սոֆիայի խնդիրը համաշխարհայինն է: «Վտանգաւորը այն է, որ Այա Սոֆիայի հարցը յոյն-թրքական խնդիր կը նկատենք, սակայն անկախ համաշխարհայինն է: Անկախ կանոններու ջնջման եւ միջազգային ընտանիքը չարգելու խնդիր է», ըսաւ ան:

Տակտիաս աւելցուց, որ Ս. Սոֆիայի վերաբերեալ թրքական որոշումը կ'առնչուի Յունաստանի եւ շրջակի երկիրներուն դժւ սարդիչ քայլերու շարքին, եւ պէտք չէ անտեսել այն իրականութիւնը, որ Թուրքիան գործակցութեան որեւէ ոգի եւ միջազգային օրէնքի հիմամբ գործակցութեան պատրաստակամութիւն չի ցուցաբերել:

Տակտիաս յայտնեց, որ այսօր Պրիւքսելի մէջ պիտի գումարուի Եւրոպական Միութեան արտաքին գործոց նախարարներու խորհուրդի ժողովը, որուն ընթացքին պիտի քննարկուի Թուրքիոյ հարցը: «Յունաստան այդտեղ Եւրոպական Միութենէն պիտի պահանջէ Թուրքիոյ դժւ առաւելագոյն քայլերու ցանկ պատրաստել, եթէ Թուրքիան խայտէ Յունաստանի գերիշխանական իրաւունքները», ընդգծեց Տակտիաս:

«Պատժամիջոցները պիտի չվերաբերին Այա Սոֆիային: Այդ հարցին վերաբերեալ պէտք է նախաձեռնութիւնը գայ ԵՈՒՆԵՍԿՕ-էն եւ ՄԱԿ-էն եւ ոչ միայն Յունաստանէն: Էրտողան ամէն ինչ դիտումաւոր կերպով կը կատարէ, աւելին, աս կը ջնջէ իր երկրին աւանդութիւնները եւ կռնակ կը դարձնէ միջազգային ընտանիքին ու անոր կանոններուն», ըսաւ յունական դիւանագիտութեան պետը:

Փրանչիսկոյ պապը երէկ յայտնեց. «Մտածումս կ'երթայ Պոլիս, կը մտածեմ Այա Սոֆիայի մասին: Ես շատ տխուր եմ»:

Արաբական Միացեալ Եմիրութիւններու մշակոյթի եւ երիտասարդութեան նախարար եւ ազգային կրթութեան եւ մշակոյթի յանձնախումբի նախագահ Նուրա պընթ Սոհամետ Զաապի յայտնեց, որ «Այա Սոֆիայի թանգարանի կարգավիճակը փոխելը չյարգեց մարդկայնական արժէքը այդ պատմական յուշարձանին, որ միշտ ալ համաշխարհային ժառանգութիւն էր եւ մշակութային ու ժառանգական արժէք կը ներկայացնէր, ինչպէս նաեւ ժողովուրդներու մերձեցման եւ անոնց միջեւ գաղտնալոյ կապերու ամրապնդման կամուրջ էր:

Զաապի աւելցուց, որ մարդկային ժառանգութեան պաշտպանութիւնն ու պահպանումը կ'ամրապնդէ տարբեր ժողովուրդներու միջեւ հանդուրժողականութեան ու գոյակցութեան արժէքները, որովհետեւ համաշխարհային ժառանգութեան յուշարձանները վերածուած են դարերու ընթացքին մարդկութեան պատմութիւնը գոյացուցած մշակոյթներու եւ քաղաքակրթութիւններու միջեւ գիտութեան փոխանակման հարթակներու:

Ան նշեց, որ Այա Սոֆիան Սփոյ եւ Եւրոպայի փոխարքերութեան կարելոր օրինակ մըն է եւ պէտք է քաղաքակրթութիւններու միջեւ երկխօսութեան վրայ հիմնուած մարդկութեան հանդուրժողական պատմութեան վկան մնայ: Եւրոպական Միութեան արտաքին քաղաքականութեան բարձրագոյն յանձնակատար Ճոզեփ Պորել յայտնեց. «Թրքական պետական խորհուրդի՝ արդի Թուրքիոյ պատմական որոշումներէ մէկը ջնջելու որոշումը եւ նախագահ Էրտողանի՝ այդ յուշակոթողը կրօնական հարցերու վարչութեան վերահսկողութեան տակ ղեկել ցաւալի են»:

ԵՈՒՆԵՍԿՕ-ի ընդհանուր տնօրէն Օտրի Ազուլէ խոր ցաւ յայտնեց թրքա-

կան իշխանութիւններուն՝ առանց նախապէս երկխօսութիւն կատարելու Ս. Սոֆիայի վերաբերեալ որոշում որդեգրելուն առնչութեամբ: Ան ուրբաթ գիշեր ԵՈՒՆԵՍԿՕ-ի մօտ Թուրքիոյ դեսպանին յայտնած է այս առնչութեամբ իր խոր մտահոգութիւնը:

ԹԱՍՍ լրատու գործակալութիւնը հաղորդեց, որ Եգիպտոսի Գերագոյն միւլֆօի խորհրդական Իպրահիմ Նիկմ Ս. Սոֆիայի կարգավիճակը փոխելու Էրտողանի որոշումը «վտանգաւոր քաղաքական խաղ» կոչած է:

Ըստ անոր, տաճարը մզկիթի վերածելու խնդիրը պէտք է դիտել Թուրքիոյ նախագահի քաղաքական նպատակին տեսանկիւնէն: «Այս իրադարձութեան ժամանակն ու հանգամանքները կը խօսին այն մասին, որ ասիկա բացառապէս քաղաքական որոշում է, որ կարելի է դիտել իբրեւ փորձ թուրք դեկամպիին կողմէ՝ ինքզինք դարձնելու հերոս, որ իբրեւ թէ կը պաշտպանէ իսլամական տրբավայրերը եւ վերածնունդ կու տայ անոնց փառքին»:

«Շատերը այժմ դատողութիւններ կ'ընեն Էրտողանի գործողութիւններուն պատմական եւ իրաւական ճշմարտացիութեան մասին, սակայն ասիկա միայն ապարդիւն պատմական քննարկում է: Իրականութեան մէջ այս քայլէն ոչ մէկ օգուտ կայ, որովհետեւ ատիկա մեզ միայն կը շեղէ վտանգաւոր քաղաքական խաղի իրական պարունակէն», ըսած է ան:

Միւլֆօի խորհրդականը համոզուած է, որ հարցը ունի բացառապէս քաղաքական նախապատմութիւն եւ կը նպատակադրէ թուրք ժողովուրդին առջեւ բարձրացնելու նախագահին վարկանիշը:

«Էրտողան պարզապէս քաղաքական յաւանութիւններ ունեցող անձնաւորութիւն չէ, որ կը սաւառնի քարիւղի եւ կազի հանքահորերու վրայ, այստեղ յստակ կերպով կ'երեւի անոր ազահուլիւնը, որ ան ցուցարարած է շարք մը երկիրներու մէջ՝ փորձելով խլել անոնց գերիշխանութիւնն ու պաշարները: Եւ այս խնդիրը ոչ մէկ կապ ունի մզկիթներու եւ կրօններու հետ», ընդգրծած է Նիկմ:

Կարգիներու գործերու Եգիպտական նախարարութեան նախկին խորհրդական շէյխ Սալէմ Ապտէլ Կալիլ ԹԱՍՍ լրատու գործակալութեան հետ զրոյցի ընթացքին ըսած է, թէ իսլամական հիմնարար չափանիշներով խստիկ կ'արգիւրդի ոչնչացնել եկեղեցիներն ու երկրպագութեան այլ վայրերը, համապատասխանաբար, զանոնք մզկիթներու վերածելը անընդունելի է:

«Մենք կը հետեւինք առաջին իսլամներու վարքագիծին՝ Սոհամետ մարգարէի ժամանակներէն, եւ անոնք կը բացառեն այլ կրօններու տաճարները իսլամներու արթթատեղիներ դարձնելու կարելիութիւնը: Ատիկա անընդունելի է: Այո՛, մենք պէտք է ապահովինք իրաւական փաստաթուղթերուն, սակայն եթէ դատարանը այդպիսի կողմնակալ որոշումներ կայացնէ, ապա ատիկա սիւսալ պիտի ըլլայ, եթէ միայն դատարանի վճիռը հիմնուած չէ եկեղեցիի շէնքի առջուկաճառքի կամ շահագրգիռ կողմերու միջեւ, այլ համաձայնագիրներու վրայ: Այդ պարագային իրաւական խնդիրներ չկան», նշած է ան:

Ռուսիոյ ուղղափառ եկեղեցւոյ պատրիարքարանի արտաքին եկեղեցական յարաբերութիւններու սինոտոսական բաժնիի վարիչ Վոլոքոյմիան մետրոպոլիտ Իլարիոնը (Ալֆայէ) իր կարգին ԹԱՍՍ-ին յայտնած է. «Կարելի է տարբեր կերպ գնահատել Թուրքիոյ ներքաղաքական իրավիճակը եւ այն գործօժանեը, որոնք Թուրքիոյ ղեկավարութիւնը որդած են նման որոշում տալու: Սակայն ամբողջ աշխարհի հոգեւոր եւ մշակութային ժառանգութիւնը պէտք չէ պատանդ դառնայ ներկայ քաղաքական իրավիճակին: Ցաւալի է, որ քաղաքական պայմանները կը գերիշխեն այլոց կրօնական ասանդութիւններուն հանդէպ յարգանքին վրայ: Սուրբ Սոֆիան մզկիթի վերածելը ապտակ է, որ Թուրքիոյ ղեկավարութիւնը հասցուցած է ուղղափառ եկեղեցիին, ամբողջ աշխարհի քրիստոնէութեան»:

Ան նշած է, որ Թուրքիոյ պետական ղեկավարութեան այս որոշումը չի կրնար չհիւսթափեցնել: «Սուրբ Սոֆիան կառուցուած է իբրեւ Յիսուս Զրիստոսի խորհրդած տաճար, եւ մենք՝ ուղղափառ քրիստոնեաներս, այլ ձեռով չենք կրնար գայն ընկալել: 1934 թուականէ մինչեւ այսօր Ս. Սոֆիան ուներ թանգարանի կարգավիճակ, ինչ որ քրիստոնեաներուն, իսլամներուն եւ այլ կրօններու ներկայացուցիչներուն կարելիութիւն կու տար առանց խնջողութիւնի այցելել այնտեղ... Ուղղափառ քրիստոնեաներուն համար Սուրբ Սոֆիան Նոյնն է, ինչ որ կ'արգիւրդէր իսլամական Զոռմի Սուրբ Պետրոսի տաճարը: Անկախ խորհրդանշական տաճար է եւ քրիստոնէական մեծագոյն սրբավայրերէն մէկը», աւելցուցած է հոգեւորականը՝ ընդգծելով, որ քրիստոնեաները գայն այլ կերպ ընկալել չեն կրնար եւ չեն ուզեր:

«ԴՌՎ Նովոսթի» հաղորդեց, որ Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդի ընդհանուր տնօրէնի ժամանակաւոր պաշտօնակատար Իոան Սաուքա Էրտողանին ուղղուած իր նամակին մէջ յայտնած է, թէ Ս. Սոֆիա մզկիթի կարգավիճակը վերականգնելը կրնայ յանգեցնել կրօնական պառակտման եւ վտանգաւոր նախադէպ ստեղծել այլ կրօնական խումբերու համար: Ան «Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդի եւ 110 երկիրներէ 350 եկեղեցիներու վիշտն ու տարակուսանքը» արտայայտած է թրքական իշխանութիւններուն քայլին նկատմամբ:

«Որոշելով Սուրբ Սոֆիան դարձեալ մզկիթի վերածել, դուք ետ շրջած էք Թուրքիոյ թափանցիկութեան դրական նշանները եւ զանոնք վերածած էք բացառման եւ բաժանման նշաններու», կը նշուի նամակին մէջ:

Սաուքա ափսոսաց, որ Թուրքիոյ որոշումը կայացած է առանց իրավիճակը ԵՈՒՆԵՍԿՕ-ի հետ քննարկելու՝ հաշուի առնելով Ս. Սոֆիայի միջազգային արժէքը:

Ըստ անոր, Ս. Սոֆիայի մզկիթի կարգավիճակի վերականգնումը «անխուսափելիորէն պիտի յանգեցնէ անապահովութեան, կասկածներու եւ անվստահութեան, պիտի խաթարէ տարբեր հաւատքի տէր մարդիկը երկխօսութեան եւ համագործակցութեան սեղանի շուրջ համախմբելու բոլոր ջանքերը»:

Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդին մէջ նաեւ մտավախութիւն ունին, որ Թուրքիոյ իշխանութիւններուն որոշումը «պիտի ոգեւորէ յաւանութիւնները այն խումբներուն, որոնք կ'ուզեն փոխել գոյութիւն ունեցող սրբութիւն քոն եւ յառջա մղել կրօնական համայնքներու տարանջատման գաղափարը»:

Թուրք աշխարհառեակ գրագետ, նոպետեան մրցանակակիր Օրիան Փամուք «Պի.Պի.Սի.»-ի հետ հարցազրոյցի ընթացքին յայտնեց, որ Ս. Սոֆիայի կարգավիճակը անգամ մը եւս մզկիթի փոխելը «դժբախտաբար կը նշանակէ մնացեալ աշխարհին յայտնել, թէ այլեւ աշխարհիկ չենք»:

ԱԶԳԻՅՈՒՆԻ ՊԼԱՏՊԼԱՆՈՒԹԵԱՆ...

Շարունակում Ա. Էջն



իր Էջին վրայ գրած է Զայաստանի պաշտպանութեան նախարարութեան մամլոյ բանբեր Շուշան Ստեփանեան: «Զայկական կողմի նախագգուշացումէն ետք Ազրպէյճանի զինուորները, ծգելով ՌԴՁ մակնիշի մեքենան, վերադարձած են իրենց դիրքը: Ժամը 13:45-ին Ազրպէյճանի զինուած ուժերու զինուորները կրկնած են հայկական զինուած ուժերու սահմանալայն դիրքը գրաւելու փորձը՝ կիրարկելով հրետանային կրակ, սակայն ճնշուած են հայկական կողմէն եւ, կորուստներ կրելով՝ ետ շարտուած», յայտնած է Ստեփանեան՝ աւելցնելով, որ հայկական կողմէն կորուստներ չկան:

Ազրպէյճանի պաշտպանութեան նախարարութիւնը կը յայտնէ, որ հայ-ազրպէյճանական սահմանին 12 յուլիսին տեղի ունեցած դէպքին պատճառով սպաննուած է ազըրպէյճանցի 2 զինուոր, իսկ 5 ուրիշներ վիրաւորուած են:

Աւելի ուշ, կիրակի, 12 յուլիսի երեկոյեան Զայաստանի պաշտպանութեան նախարարութեան մամլոյ բանբերը տեղեկացուց, թէ Ազրպէյճան վերսկսած է ռմբակոծել Տաւուշի հայկական զինուորական Նոյն դիրքերը:

Ան ըսած է, որ իրավիճակի լարման հետեւանքներու ամբողջ պատասխանատուութիւնը պիտի կրէ Ազրպէյճանի ռազմաքաղաքական ղեկավարութիւնը:

ՆԱԳՂԱԼԵԱՆ ՄԵԿՆԱԲԱՆԱԾ Է ՍՈՒՐԲ...

Շարունակում Ա. Էջն



տաճար-թանգարանը մզկիթի վերածելու Թուրքիոյ իշխանութիւններու որոշումով:

Սուրբ Սոֆիայի տաճարը զուտ պատմական եւ մշակութային կոթող չէ: Իր պատմութեան ընթացքին անկիւ ունեցած է տարբեր կրօնական, մշակութային եւ քաղաքական նշանակութիւն:

Սուրբ Սոֆիայի տաճարին թանգարանի կարգավիճակի շնորհումը եւ ԵՈՒՆԵՍԿՕ-ի Զամաշխարհային ժառանգութեան ցանկին մէջ ընդգրկումը կարելիութիւն տուած են գայն դարձնելու ոչ թէ քաղաքակրթութիւններու բախման, այլ համագործակցութեան եւ մարդկութեան միասնութեան խորհրդանիշ: Ցաւով պէտք է արձանագրել, որ Թուրքիոյ իշխանութիւններուն վերջին որոշումը կը փակէ Սուրբ Սոֆիայի տաճարի պատմութեան այդ՝ կարելոր խորհրդանիշի եւ առաքելութեան էջը:

Այս որոշումը կը ստեղծէ ԵՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգութեան վայրի բնոյթի եւ նպատակաւ եկան փոփոխութեան վտանգաւոր նախադէպ եւ անիրաժէշտ կը դարձնէ Թուրքիոյ տարածքին նման կարգավիճակ ունեցող պատմական վայրերու պահպանման նպատակով միջազգային հանրութեան եւ յատկապէս ԵՈՒՆԵՍԿՕ-ի մշտադիտարկումը:

Առգանց Լաւրան

Հորեքշաբթի, 15 Յուլիս 2020-ին, երեկոյեան Պէյրուէի ժամանակացոյցով ժամը 18:00-ին:

Մասնակցութեան համար գրել minas777@gmail.com եւ նամակին կամ +961 70 80 70 50 համարին (WhatsApp)

ՄԻՋԱԳԱՅԻՆ ԱՓԻՈՔՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆ ՍՓԻՈՔՐ

Չեկուցող՝ Փոռֆ. Խաչիկ Թեօլեօլեան Սփիւռքագէտ, Ուեսլեյան համալսարան

ԱԶԳԱԿ
ԵՐԱՅԵՐԵ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԿԱՐԵ ՄԵԾԵՄՆ ՀՐԱՏԱՐԱԿԶԱՏՈՒՄ

ՆԻԻԹԵՐ Լ.Յ.ՊԱՇՆԱԿՅՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ԺԳ. ՀԱՏՈՐ

Խմբագիր՝ ԵՐՈՒՄՆԻ ՓԱՄՊՈՒՔԵԱՆ
Հրապարակութիւն՝ ՀՅԴ ԲԻՒՐՈՑԻ
Մեկնատեքնամբ՝ ՏԵՐ ԵՐ ՏԻԿՆԻ ԿԱՐՊԻՍ ԵՒ ՄԱՐԱՆ ՄԻԾԵՄՆԵՐՈՒՄ

Շտրիսիւսիւն

Խօսք կ'առնէ
ՓՐՈՓ. ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆԵԱՆ (հեռակապով)
Ազգային ակադեմիայի պարմութեան հիմնարկի տնօրէն

Ձեռնարկին կարելի է հեքելիլ նաեւ առցանց՝
f ՀՅԴ Լիբանան, ARF Lebanon, Tashnag

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 13 ՅՈՒՆԻՍ 2020-ին, երեկոյեան ժամը 7:00-ին,
«Ազգակ»-ի «Փիւնիկ» սրահին մէջ:

